ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՆԻՇԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ
АДМИНИСТРАЦИИ СЕЛА АРТАНИШ
REPUBLIK OF ARMEN IA
REGION OF GEGHARKUNIK
ADMINISTRATION OF ARTANISH

Հասցե - գ.Արտանիշ

ՀԿՀՀ 08100669

N -------13--------

«---06--» -փետրվարի -2017թ..

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝
Պ-ՐՆ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Ձեզ է ուղարկվում Արտանիշ համայնքի ավագանու 2017 թ. հունվարի 31-ի արտահերթ նիստի թիվ 7 և 8 որոշումները՝ ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներին <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Արտանիշ համայնքի պատվավոր քաղաքացի>> կոչում շնորհելու կարգը հաստատելու և ՀՀ քաղաքացի Ղ.Ա.Մուրադյանին <<Արտանիշ համայնքի պատվավոր քաղաքացի>> կոչում շնորհելու մասին:

Առդիր 3 թերթ

Արտանիշ համայնքի
ղեկավար Կ.Շուշանյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՆԻՇ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԹԻՎ 02 ՆԻՍՏ

31 հունվարի 2017թ. գ.Արտանիշ

Տեղի ունեցավ Արտանիշ համայնքի ավագանու 2017թ. թիվ 02 արտահերթ նիստը: Նիստին մասնակցում էին ավագանու անդամներ՝

1. Մ.Գնորգյանը
2. Լ.Մանուչարյանը
3. Ա.Մարգարյանը
4. Ա.Սարգսյանը:

Նիստը վարում է համայնքի ղեկավար Կ.Շուշանյանը

Արձանագրում է աշխատակազմի քարտուղար Մ.Աղաջանյանը

Օ ր ա կ ա ր գ

1. Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արտանիշ համայնքի պատվավոր քաղաքացի>> կոչում շնորհելու կարգը հաստատելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության քաղաքացի Ղևոնդ Աղասու Մուրադյանին <<Արտանիշ համայնքի պատվավոր քաղաքացի>> կոչում շնորհելու մասին:

Համայնքի ղեկավար Կ.Շուշանյան

քարտուղար Մ.Աղաջանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՆԻՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» հունվարի 2017թ. N 7-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ << ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՆԻՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ >> ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 26-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջար կությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արտանիշ համայնքի պատվավոր քաղաքացի>> կոչում շնորհելու կարգը համաձայն հավելվածի:

2,Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ (4) Դեմ (0) Ձեռնպահ (0)

1. ՄԽԻԹԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ
2. ԼԵՎՈՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
3. ԱՐՄԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ
4. ԱՐՍԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՇՈՒՇԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՆԻՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» հունվարի 2017թ. N 8-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ ՂԵՎՈՆԴ ԱՂԱՍՈՒ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ << ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՆԻՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ >> ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 26-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջար կությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. 2016 թվականի ընթացքում Արտանիշ համայնքի խմելու ջրի նոր ջրատարի կառուցման, գործող ջրատարի արդիականացման, նոր ՕԿՋ-ի կառուցման և հին ՕԿՋ-ի վերակառուցման, համայնքի բնակիչներին ցույց տրված օգնության, ներդրված աշխատանքների, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանն ու բարեկեցությանն ուղղված նշանակալի գործունեության համար <<Մեդիսոն-Էյբլ>> ՍՊԸ-ի աշխղեկ Ղևոնդ Աղասու Մուրադյանին շնորհել <<Արտանիշ համայնքի պատվավոր քաղաքացի>> կոչում:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ (4) Դեմ (0) Ձեռնպահ (0)

1. ՄԽԻԹԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ
2. ԼԵՎՈՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
3. ԱՐՄԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ
4. ԱՐՍԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.ՇՈՒՇԱՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՆԻՇ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2017թվականի ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի
N 7-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ << ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՆԻՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ>> ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին (հետագայում՝ քաղաքացիներ) <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արտանիշ համայնքի պատվավոր քաղաքացի>> կոչում շնորհելու կարգը:
2. <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արտանիշ համայնքի պատվավոր քաղաքացի>> կոչումը պատվավոր կոչում է՝ նախատեսված <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով:
3. <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արտանիշ համայնքի պատվավոր քաղաքացի>> կոչումը շնորհվում է Արտանիշ համայնքի ավագանու կողմից, համայնքի ղեկավարի առաջարկությամբ՝ սույն կարգին համապատասխան:
4. <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արտանիշ համայնքի պատվավոր քաղաքացի>> կոչմանը կարող են արժանանալ, անկախ ազգությունից, ռասսայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, գույքային և այլ դրությունից, այն քաղաքացիները, որոնք իրենց երկարամյա անբասիր աշխատանքով և (կամ) բացառիկ մեծ վաստակով նպաստել են Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արտանիշ համայնքի բարգավաճմանը, ակնառու ներդրում ունեն համայնքի տնտեսական, մշակութային զարգացման գործում, իրենց կյանքում ու անցած ուղով նպաստել են ժողովուրդների բարեկամության և խաղաղության հաստատմանը, անուրանալի ավանդ ունեն մշակույթի, արվեստի, գրականության կամ գիտության զարգացման բնագավառում:
5. <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արտանիշ համայնքի պատվավոր քաղաքացի>> կոչում շնորհելու գրավոր առաջարկով կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական միավորումները, հիմնադրամները, իրավաբանական անձանց միությունները, հասարակության լայն զանգվածները և մշակութային, կրթական, գիտական կազմակերպությունները, Հայ Առաքելական եկեղեցին, պետական կառավարման մարմինները, որոնք պարտավոր են հիմնավորել իրենց առաջարկը, համակողմանիորեն լուսաբանել <<Հայաստանի

Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արտանիշ համայնքի պատվավոր քաղաքացի>> կոչմանը ներկայացվող քաղաքացու կյանքը, գործունեությունը, ներկայացնել համապատասխան նյութեր և քաղաքացու լուսանկարը:

6. Ստացված առաջարկությունները ներկայացվում են Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արտանիշ համայնքի ղեկավարին:
7. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արտանիշ համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքի ավագանին որոշում է ընդունում <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արտանիշ համայնքի պատվավոր քաղաքացի>> կոչում շնորհելու մասին:
8. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արտանիշ համայնքի պատվավոր քաղաքացուն, հանդիսավոր պայմաններում հանձնվում է <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արտանիշ համայնքի պատվավոր քաղաքացու>> կոչում շնորհելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշումը և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արտանիշ համայնքի պատվավոր քաղաքացու վկայականը:
9. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արտանիշ համայնքի պատվավոր քաղաքացու անունը գրանցվում է Արտանիշի համայնքապետարանում պահվող, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արտանիշ համայնքի պատվավոր քաղաքացիների հաշվառման հատուկ գրքում:
10. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արտանիշ համայնքի պատվավոր քաղաքացուն հանձնվող վկայականի և հաշվառման հատուկ գրքի ձևերը հաստատում է համայնքի ավագանին:
11. <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արտանիշ համայնքի պատվավոր քաղաքացու>> կոչում շնորհելու մասին համայնքի ավագանու որոշումը և համայնքի պատվավոր քաղաքացու կյանքը և գործունեությունը պարտադիր լուսաբանվում է զանգվածային լրատվության միջոցներով:
12. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արտանիշ համայնքի ավագանու որոշումներով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արտանիշ համայնքի պատվավոր քաղաքացիների համար կարող են սահմանվել արտոնություններ: